ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՅԵՏՊՈՏՍԴԱՄԵԱՆ ԾՐԱԳԻՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐՈՒՄ

1945թ. յուլիսի 23-ին ժամը 17:10 րոպէին Պոտսդամում գումարուեց դաշնակից երկրների հերթական նիստը: Քննարկման դրուած մէկ տասնեակ հարցերի շարքում էր նաեւ հայկական, այժմ արդէն հայկական ու վրացական տարածքների խնդիրը: Ստալինը թուրքերին չվախեցնելու Ջերչիլի պահանջից յետոյ, անդրադառնում է կարսի եւ Արդահանի խնդիրներին եւ աւելացնում, որ եթէ թուրքերը դէմ են սահմանները ճշգրտելու խորհրդային առաջարկին, «ապա վերանում է դաշինքի հարցը»[1]:

Նոյն նիստում, նախագահող Տրումէնը կարծես ամփոփելով քննարկուած հարցերը, անդրադարձաւ նաեւ հայկական տարածքների խնդրին եւ յստակեցնելով նաեւ ԱՄՆ դիրքորոշումը յայտնեց. «Ինչ վերաբերում է տարածքների հարցին, ապա այն վերաբերւում է միայն Խորհրդային Միութեանը եւ Թուրքիային եւ պէտք է լուծուի նրանց միջեւ»[2]:

Այդուհետ տարածքների խնդիրը այլեւս չքննարկուեց, թէեւ 1945թ. յուլիսի 23 ԱԳ նախարարների նիստում որոշուեց կառավարութիւնների ղեկավարների քննարկմանը ներկայացուող օրակարգում ընդգրկել նաեւ թուրքական հարցը:

Այսպիսով հերթական անգամ բարձր ատեան բարձրացուած Հայկական հարցը նոր ճեւակերպում չստացաւ, այն վերածուեց սոսկ տեղեկատուական բնոյթի հարցի, որը լուծելու էին այն տէրութիւնները, որոնք արդէն երկու դար շարունակ շահարկում եւ մերժում էին հայ ժողովրդի օրինական պահանջը:

Փոխուում էին ժամանակները, սակայն չէին փոխուում կարծրացած դիրքորոշումները, որոնք այժմ արդէն նոր կերպարանաւորում էին ստացել՝ «Թուրքիոյ արեւելեան սահմանները Միացեալ

---

1 *Армения и советско-турецкие отношения в дипломатических докумнтах 1945-1946 гг.*, Ереван, 2010, 184:

2 Անդ, 186:

նահանգներու սահմաններն են»։ *Տրումենեան ձեւակերպումը չարունակեց խորանալ, նոր իմաստ ձեռք բերեց, որովհետեւ Թուրքիան առատօրէն վարձատրուելով, վերածուել էր ԽՍՀՄ դէմ ռազմական կարեւոր յենակէտի։*

Յետպատերազմեան տարիներին ոչ միայն չմեղմացան աշխարհաքաղաքական հակասութիւնները, այլեւ նոր բռնկումներ էին արձանագրւում տարբեր տարածաշրջաններում։ Ճապոնիայի պարտութիւնից եւ ատոմային զէնքի օգտագործումից յետոյ, ԱՄՆ իրեն արդէն տեսնում էր գերտիրութեան կարգավիճակում։ Այդ ուղղութեամբ մշակուեցին Տրումենի դոկտրինան, Մարշալի ծրագիրը։ Սպառազինութիւնների մրցավազքը նոր թափ ստացաւ ԽՍՀՄ-ի ատոմային տէրութիւն դառնալուց յետոյ։

Միաժամանակ նոր տեղաշարժեր արձանագրելու առումով, ուշադրութեան կենտրոնում էին պահւում չլուծուած հարցերի վերլուծութիւնները։ Այս խնդիրների շարքում էր նաեւ Հայկական հարցը, թէեւ այն ներկայացւում էր ոչ թէ այս անուանումով, այլ «Թուրքիայից Հայաստանի հանրապետութեան կողմից տարածքային պահանջներ» վերնագրով, որը Պոտսդամի երեք տէրութիւնների քննարկման օրակարգ էր բերել ԽՍՀՄ-ը։ Թէ ինչքանով էր հիմնաւորուած ու նախապատրաստուած խնդիրը, ցոյց են տալիս ստորեւ ներկայացուած արխիւային փաստաթղթերը։

ԽՍՀՄ հանդէս բերելով անհեռատեսութիւն, քննարկման բերեց մի խնդիր, որը խեղդողը ինքն էր։ ԽՍՀՄ ղեկավարութեան կանխատեսմամբ այստեղ վճռական դերակատարութիւն էր ստանալու այն փաստը, որ պատերազմում յաղթանակի ծանրութեան գերակշիռ մասը իր վրայ վերցրած ԽՍՀՄ-ին կը վերապահուէր վճռական խօսքը։

Այս մտադրութեան հեղինակների ուշադրութիւնից վրիպել էր ամենակարեւորը, այն, որ ԱՄՆ-ը եւ Անգլիան թաքուն մրցակցութիւն են սկսել ԽՍՀՄ հեղինակութիւնը գցելու, առաջնութիւնը չահելու, խնդիրները իրենց օգտին լուծելու համար։

Անգլո-ամերիկեան կողմը այժմ փորձում էր պարզել, թէ հայերը իրօք ունեն տարածքային պահանջներ, թէ դա խորհրդային կառավարութեան սադրանքն է, վերջապէս ու՞մ են պատկանում այդ տարածքները։

Աւելորդ չէ աւելացնել, որ յետպատերազմական վերլուծականների հիմքում, դրուած էր այն միտքը, որ խնդիրը ծնուել է ժթ. դարի ռուս-թուրքական պատերազմների շրջանից։ Այնու-

հետեւ հիմնաւորուեց այն տեսակէտը, որ տարածքային պահանջները ուրիշ ոչինչ չեն, քան Միջերկրական ծով դուրս գալու ցարական ձգտումների իրականացում: Այս առումով էլ առաջնային էր դառնում Թուրքիային պաշտպանութիւնը: Այսինքն, կրկնուելու էր այն իրավիճակը, ինչը ստեղծուել էր Առաջին աշխարհամարտի աւարտական փուլից մինչեւ Լոզանի կոնֆերանս ընկած շրջանում, երբ պարտուած Թուրքիային վերապահուեց յաղթողի կարգավիճակ:

Իսկ դրա հիմքը դրուել էր ԱՄՆ-ի կողմից, որը իր իրաւասութեան տակ առնելով ՄԱԿ-ի կազմաւորման գործընթացը, կազմել էր հիմնադիր նիստին մասնակից երկրների ցուցակը, որտեղ իր տեղն էր զբաղեցրել նաեւ Թուրքիան, ձեւական վերապահութեամբ, որ այդ երկիրը պէտք է պատերազմ յայտարարի Գերմանիային եւ «մինչեւ մարտի 1-ը ստորագրի Միացեալ Ազգերի դեկլարացիան»[3]:

1945թ. հոկտեմբերի 5-ին հայկական տարածքների խնդրին անդրադարձաւ բրիտանական ԱԳՆ հետազօտական «Ֆորին Օֆիս» բաժանմունքը: «Հայկական պահանջ թուրքական տարածքի վերաբերեալ» նրա հեղինակած տեղեկանքի անուանումն անգամ յուշում էր, որ գործ ենք ունենալու կողմնակալ դիտարկումների հետ: Նախ, հեղինակը իր յետագայ տեսակէտները հիմնաւորելու նպատակով յայտնում էր, որ հայերը մինչեւ 1945թ. գոհ են եղել իրենց ճակատագրից, որ երբեք տարածքային խնդիրներ չեն ունեցել, որ առկայ պահանջը ծնունդ է տարերայնօրէն եւ այդ ամբողջը «խորհրդային սադրանքի» հետեւանքն է:

Ապա տեղեկագիրը ծանօթացնում է պահանջի նկատմամբ ձեւաւորուած կարծիքներին, համաձայն որոնց, հայերը ցանկանում են արտասահմանում գտնուող հայրենակիցներին հայրենիք վերադառնալու հնարաւորութիւն ստեղծել եւ որպէս լրացում յայտնում՝ «դա արդար բայլ կը լիներ մի ազգի նկատմամբ, որի հետ անցեալում ծայրայեղ անարդար էին վարուել», ապա մի կարծիք, որը ի չիք է դարձնում առաջին երկու փոքր ի չատէ մարդասիրական եզրակացութիւնները եւ կրկնում է «Նիւ Եորք Թայմս»ում տպագրուած մի նամակի հեղինակի խօսքերը. «Կարսի ամրութիւնը Խորհրդային Միութիւնը ռազմավարական տեսանկիւնից շատ անհրաժեշտ է»[4]:

3 Foreign Relations of United States..., 775:
4 Անդ, 268:

Այստեղից էլ, թէկուզ մասնակիօրէն լուծել Հայկական հարցը, նշանակում է Ռուսաստանի համար ճանապարհ հարթել դէպի նեղուցները ու Միջերկրական ծով։ Ասել է, նորից ասպարէզ էր բերում դարեր չարունակ կրկնուած այն «մտահոգութիւնը», համաձայն որի, եթէ հայերը դուրս գտնուէին ռուսական ազդեցութեան չրջանակներից, հնարաւոր էր, որ ստանային իրենց խնդրի ցանկալի լուծումը։ Սակայն պատմութիւնը չի մոռանում թէկուզ 1917-1920 թթ. իրադարձութիւնները, երբ նման կարգավիճակում գտնուող հայութիւնը անհրաժեշտ պաշտպանութեան չարժանացաւ անգամ դաշնակից յորջորջուող որեւէ երկրի կողմից, չփակեց թուրքական եաթաղանի սրատող ընթացքի ճանապարհը։

Տեղեկանքում, սկսած հնագոյն ժամանակներից, հանգամանալից ներկայացուում է հայ ժողովրդի պատմութիւնը Հռոմի, Բիւզանդիայի հետ առնչութիւնները, «հայկական պետութեան գագաթնակէտով» *(խօսքը ամենայն հաւանականութեամբ վերաբերվում է Տիգրան Մեծի ժամանակներին – Ց. Զ.), քրիստոնէութեան ընդունման, արաբական տիրապետութեան, 1534թ. թուրքական նուաճման, պարսկական տիրապետութեան, Կիլիկիայի հայկական թագաւորութեան, Գիւլիստանի, Թուրքմենչայի, Սան Ստեֆանոյի պայմանագիրը, 1918թ. իրադարձութիւնները։*

Տեղեկանքը անդրադառնում է նաեւ թուրքական հայաջինջ քաղաքականութեանը. «Հայերը Օսմանեան կայսրութեան ամենահաւատարիմ ենթակայ ժողովուրդներից էին, մինչեւ որ Պորտան չկարողացաւ իրենց համար այդքան ցանկալի բարեփոխումների իրականացումը 19-րդ դարի վերջին, իսկ դժգոհութեան զգացումը ցաւօք միայն աճեց Մեծ Բրիտանիայի եւ Ռուսաստանի կողմից իրենց հանդէպ ցուցաբերած հետաքրքրութեան անկանոն եւ տեւական արտայայտութիւններից։ Ցետոյ յայտնուեցին Դաշնակցութիւնն ու հայ յեղափոխական այլ կազմակերպութիւնները, որոնք աւօրինական գործունէութիւն էին ծաւալել։ Այդ ժամանակից ի վեր թուրքերը ճնշում էին հայկական յուզումների ցանկացած փորձ ջարդերի եւ այլ դաժան միջոցներով (1896 եւ 1909թթ.), իսկ 1915-1916թթ. երբ հայկական համակրանքը նոր ասպարէզ դուրս եկած ցարական կառավարութեան կողմը թեքուեց, նրանք կոտորածներ եւ տարհանութիւններ կազմակերպեցին այնքան մեծ չափերի, որ Անատոլիան գրեթէ դատարկեցին հայերից»[5] *(ընդգծումները – Ց. Զ.)։*

5 Անդ, 269։

digitised

Տեղեկանքի հեղինակը գրեթէ քաղաւեղեակ լինելով հայոց պատմութեանը, յատկապէս թուրքական տիրապետութեան շրջանի գնահատման հարցում կրկնում է սուլթանի, երիտթուրքերի, քեմալականների տեսակէտները եւ բացայայտ արդարացնում վերջիններիս իրականացրած հայասպին քաղաքականութիւնը:

Բացի այդ, միտում կայ հիմնաւորել թուրքական բռնատիրութեան օրինական իրաւունքները հայութեան հայրենիքի նկատմամբ. «Կարճ ասած, չնայած հայերի պատմական իրաւունքը իր հայրենիքի վերաբերեալ թուագրուած է մ.թ.ա. 7-րդ դար, միեւնոյն է թուրքերի չորս հարիւր տարի շարունակ դրա տարածքի մեծ մասը շրջափակման մէջ էին պահում... »[6]:

Բացայայտօրէն չարունակելով թուրքասիրական նկրտումները, Ֆ. Օֆիսի տեղեկանքը անդրադառնում է նաեւ 1919, 1920 թթ. դիւանագիտական փաստաթղթերին, որոնցով փորձ էր արւում լուծում տալ բազմաչարչար խնդրին, որը «թուրքերին դըրդեցին դիմադրութեան» եւ քաղաքական նպաստաւոր պայմաններն օգտագործելով Լոզանի կոնֆերանսում «հիմնաւորեցին» իրենց իրաւունքները: Կոնֆերանս, որտեղ, խորհրդային կայսրութեան ու մասնակից տէրութիւնների չանքերով «այլեւս Հայաստան չէր յիշատակւում»[7]:

Թէեւ ամբողջ տեղեկանքը ունի թուրքապաշտպան նպատակ, այնուամենայնիւ հետաքրքիր տեղեկութիւններ է պարունակում ոչ վաղ անցեալի ազգաբանական կառուցուածքի, հայկական տարածքների նկատմամբ իրաւաբանական հիմնաւորումների եւ թուրքական դիրքորոշման տեսանկիւնից:

Էթնիկ կողմ

Քանի որ այժմ թուրքական տարածքներում ապրող հայ գրեթէ չկայ, այդ պահանջը հազիւ թէ հնարաւոր լինի հիմնաւորել էթնիկ փաստով: Այնուամենայնիւ, չի կարելի մոռանալ, որ ամէն ինչի պատճառը 1915 1916թթ. կոտորածներն էին: Դրանից առաջ վեց վիլայեթներում մօտ մէկ միլիոն հայ կար: Հաշմարւում է, որ մէկ միլիոն 500000 մարդ զոհուեց: Աւելի քան 300000 փախստական հասան մինչեւ Էրիւան: Միւսները փախան

6 Անդ:
7 Անդ, 270:

Սիրիա, միւս մասը վերջիվերջոյ յայտնուեց Եւրոպայում եւ Ամերիկայում: Մօտ 60000 կամ 70000 այսօր Ստամբուլում են: Թուրքիայի այլ հատուածներում մարդկանց միայն առանձին խմբեր կան (ընդհանուր մի քանի հարիւր մարդ), որոնք չատ դէպքերում կաթոլիկ լինելով կարողացան փրկուել կոտորածներից եւ տարհանութիւնից: Բայց եթէ նշուած տարածքներում հայեր չկան, ապա թուրքեր էլ չկան: Բնակչութիւնը կազմուած է քրդերից, որոնց հետ թուրքերի յարաբերութիւնները հաւասարապէս վատ են:

Իրաւաբանական կողմ

Իրաւաբանօրէն թուրքերը տիրապետութեան իրաւունք ստացան 1534թ. գրաւած տարածքների նկատմամբ: Նոյն կերպ Ռուսաստանը 1827թ. խլեց Էրիւանը Պարսկաստանից, իսկ 1878թ. Կարսը, Արդահանը եւ Բաթումը Թուրքիայից: Բրիտանիայի, Ֆրանսիայի եւ Ռուսաստանի միջեւ կնքուած համաձայնագրով Էրզրումի, Բիթլիսի, Վանի եւ Տրաբիզոնի վիլայեթները միացուելու էին Ռուսաստանին, սակայն ցարական կառավարութեան միւս համաձայնագրերի նման, այս մէկը եւս մերժուեց բոլշեւիկների կառավարութեան կողմից, իսկ Ռուսաստանի անկումից յետոյ բոլշեւիկները կորցրին Կարսը, Արդահանը եւ Բաթումը յօգուտ Թուրքիայի, եւ ձեւականօրէն այդ տարածքները Թուրքիային տուեցին համաձայն Բրեստ-Լիտովսկի պայմանագրի: Թուրքիան ճանաչեց Էրիւանի նոր հայկական պետութեան անկախութիւնը ըստ 1918թ. յունիսի 8-ի հայ-թուրքական պայմանագրի... Թուրքիայի անկումից յետոյ միութենականները նրան ստիպեցին հետ քաշուել դէպի մինչպատերազմական սահմանը: Դրան յաջորդած հայերի ներխուժումը Թուրքիա եւ Թուրքերի նոր գրաւումը աւարտուեց նրանով, որ Կարսը, Արդահանը եւ Արդուինը (բայց ոչ Բաթումը) մնացին Թուրքիայի տիրապետութեան տակ: Այս զիջումն ամրագրուել էր 1921թ. մարտի 16-ի թուրք-սովետական պայմանագրով, որը ոչ մի կերպ կապուած չէր Ռուսաստանի հետ, ինչի հետ կապուած վերջերս զրպարտութիւններ էին արուել, այն պարզապէս խաղից դուրս եկած եւ միմեանց կարիքն ունեցող երկրների միջեւ ազատ բանակցութիւնների արդիւնք էր: Սեւրի պայմանագիրն այդպէս էլ ուժի մէջ չմտաւ: Դրան փոխարինած Լոզանի պայմանագիրը ամրագրեց այն, որ Թուրքիան անվիճելիօրէն տիրեց Անատոլիան:

Սովետական Ռուսաստանը Լոզանի պայմանագրին կողմ չէր, քանի որ արդէն իր պայմանագիրն էր կնքել Թուրքերի հետ 1921թ., իսկ դրա քաղաքականութիւնը ուղղուած էր ոչ թէ Թուրքիայի Թուլացմանը, այլ նրան աջակցելուն: Իր պահուածքով նա փաստօրէն հաւանութիւն տուեց, որ Լոզանի պայմանագրում բացակայի Հայաստանի վերաբերեալ որեւէ դրոյթ:

Տնտեսական կողմ

Սովետական Հայաստանը փոքր պետութիւն է, հազիւ 300 մղոն երկարութեամբ եւ 60 մղոն լայնութեամբ: Նրա ընդհանուր մակերեսը 30000 ք. կմ. է: Մինչ 1945թ. չկային ակնարկներ, որ այն լրացուցիչ տարածքների կարիք ունի: Ընդհակառակը, սովետական իշխանութիւնը չեչտում էր դրա տնտեսական զարգացումն ու բարգաւաճումը: Այժմ համարւում է, որ Սովետական Հայաստանին աւելի չատ կենսատարածք է անհրաժեշտ: Բնակչութեան համեմատական խտութիւնը ներկայացուած է հետեւեալ ցուցանիշներով.

Մէկ քառակուսի կիլոմետրի համար

ԽՍՀՄ	7
Սովետական Ադրբեջան	37
Սովետական Հայաստան	42
Սովետական Վրաստան	51
Շուեյցարիա	104
Բելգիա	275

ԽՍՀՄ տարածքներից դուրս հայերի թիւը կազմում է 1-1,5 միլիոն մարդ: կարելի է ենթադրել, որ քանի որ Եւրոպայում եւ Ամերիկայում գտնուող հայերը հիմնականում լաւ են ապրում, ապա դժուար թէ նրանք վերադառնան իրենց երկրի դժուարին պայմաններում ապրելու: Բայց նոյնիսկ եթէ ենթադրենք, որ կէս միլիոն մարդ կը վերադառնայ արտասահմանից, ապա բնակչութեան խտութիւնը կը հասնի ընդամէնը 59-ի: Բացի այդ, քանի որ արտասահմանում ապրող հայերը հիմնակա-

նում քաղաքներում են ապրում, դժուար թէ ցանկանան գիւղական կեանքի վերադառնալ, որը Արեւելեան Անատոլիայում գոյութեան հիմնական ձեւն է: Ուստի, եթէ տնտեսապէս լրացուցիչ տարածքը չահաւէտ լինի Սովետական Հայաստանի համար, այն բոլորովին պարտադիր չի համարւում:

Թուրքական տնտեսութեան տեսանկիւնից, յարաբերականօրէն մեծ տարածքներ համարուող կարսի, Արդահանի եւ Արդուինի շրջանների կորուստը մեծ հետեւանքներ չի ունենայ: Սակայն Վիլսոնի որոշման համաձայն տարածքների անջատումը Թուրքիային կարող է բնակչութեան, գիւղատնտեսական հողերի եւ արօտավայրերի զգալի կորստի բերել, իսկ Տրապիզոնի նաւահանգստի եւ Պարսկաստանի ուղղութեամբ առեւտրական ճանապարհի կորուստը առաջնակարգ տնտեսական հարուած կը լինի:

Թուրքական դիրքորոշում

Թուրքիայի արձագանքը հայկական պահանջին բուռն էր: Վարչապետը յայտարարեց, որ Թուրքիան կը կռուի, բայց չի զիջի կարսը, Արդահանը եւ Արդուինը: Մամուլը նշում էր, որ այդ շրջանում հայեր չկան, խօսում էին այդ շրջանի՝ Թուրքիայի համար ունեցած ռազմավարական նշանակութեան մասին, ինչպէս նաեւ նշում էին, որ սովետական կառավարութեան կողմից 1921թ. այն փոխանցուել էր յօժարակամ բնոյթով:

Կարսը, Արդահանը եւ Արդուինը Ռուսաստանի եւ Թուրքիայի միջեւ կռուախնճոյր էին երեք քառորդ դար շարունակ: Թուրքիան շարունակում էր իր բաւական լաւ գոյութիւնը 1878-1918թթ. ընթացքում: Եթէ վերոնշեալ տարածքները եւս մէկ անգամ Ռուսաստանին զիջելով, նա Ռուսաստանի հետ մշտական բարեկամական յարաբերութիւնների երաշխիք ստանար, հնարաւոր կը լինէր նրան համոզել, որ նման հեռանկարը որեւէ արժէք է ներկայացնում: Սակայն հայերի ներկայիս պահանջը ներառում է ոչ միայն կարսը, Արդահանը եւ Արդուինը, այլ նաեւ նախագահ Վիլսոնի Հայաստանը: Եթէ անգամ այդ մեծ պահանջը առաջ է քաշւում թէկուզ կարսի, Արդահանի եւ Արդուինի չատ աւելի փոքր տարածաշրջան ձեռք բերելու նպատակով, միեւնոյն է թուրքերը չատ քիչ երաշխիք ունեն, որ քչին հասնելով, Ռուսաստանը յետագայում առաւել մեծ պահանջներ չի ներկայացնի: Նախագահ Վիլսոնի առաջարկած ծրագրի իրականացումը կը նշանակի, որ թուրքերը կը կորցնեն իրենց երկրի մէկ հինգե-

digitised by

րորդ մասը։ Նրանք անկասկած կը պայքարեն դա թոյլ չտալու համար»[8]։

Խորհրդային կարգերի հաստատումը, տեղեկանքի հեղինակի կարծիքով «միանգամայն իրաւացի» քայլ էր, քանզի յատկապէս անգլիական դիւանագիտութիւնը չնայած Լ. Ջորջի խոստումներին, չկարողացաւ ապահովել «այդ հնագոյն ազգի (հայերի - Յ.Զ.) ազատագրութիւնը», Մեծ Բրիտանիան չկարողացաւ «որեւէ արդիւնաւէտ բան անել հայերի համար, երբ վրայ հասաւ դրա պահը 1918թ.[9]։ *Այնուհետեւ վերլուծելով հայերի բնաւորութիւնը, նրանց յատկապէս տնտեսական գործունէութիւնը, հայերի մատուցած ծառայութիւնները, հերոսական պայքարը Երկրորդ աշխարհամարտի տարիներին, հիմքեր են ստեղծում հայերի նկատմամբ վերաբերմունքի փոփոխութեան համար, աւելին՝* «Հայերը շատ են ձգտում հասնել արեւմտեան կենսակերպի։ Ցաւալի կը լիներ, եթէ նման պոտենցիալ հնարաւորութիւններով օժտուած ազգի զարգացումը իրականում ճնշուի կենսատարածքի անբաւարարութեան պատճառով»[10]։

Այնուհանդերձ հեղինակը նորից վերադառնում է արեւմուտքի քաղաքականութեանը, հայրենադարձութեան խնդիրներին, նշում այդ իրադարձութեան դրական կողմերը, սակայն կայ մշտական, կարծր ձեւակերպում, կայ, գոյութիւն ունի, ռուսական արգելք, որով տարածքային պահանջները գնահատւում են այսպէս. «Նրանք (հայերը – Յ. Զ.) հաւանաբար անկեղծօրէն հաւատում են, որ թուրքական տարածքների (ընդգծումը – Յ. Զ.) հաշուին ընդլայնուած Հայաստանը կենսունակ պետութիւն կը դառնայ, սակայն միայն մինչեւ այդ ամէնը աւելի որոշակի չդառնայ, ուշադրութեան տակ հայկական պատմական պահանջը առնելն սխալական եւ անխոհեմ է համարւում. Այդ պահանջի հետեւում ոչ այլ ինչ է, բան Սովետական Միութեան ռազմավարական շահ»[11]։

Բնական է, որ այս կարծիքը չէր ձեւաւորուել Պոտսդամի ժամանակ կամ յետոյ։ Այն իր «արբագրումները» ստացել է 19-րդ դարից, աւելի ստոյգ, թերեւս մղուած ռուս-թուրքական տասը պատերազմների ժամանակներից, երբ արդէն յստակ էր «հի-

8 Անդ, 270-272, 274:
9 Անդ, 274:
10 Անդ, 275:
11 Անդ, 276:

ւանդ պետութիւնը» *ոչ թէ բաժան-բաժան անելու, այլ նրա կիսամեռ վիճակը պահպանելու արեւմուտքի դիրքորոշումը:*

Իսկ իրադարձութիւնները զարգանում էին: Խորհրդային երկիրը չարունակում էր զօրքերը կենտրոնացնել թուրքական սահմանի վրայ: Իր հերթին Թուրքիան մտադրուած էր զօրահաւաք անցկացնել եւ, որպէսզի խոչընդոտի խորհրդային զօրքերի սահմանի անարգել անցումը, պայթեցրեց Մարգարայի կամրջի իր հատուածը:

ԱՄՆ, Անգլիան հետեւում էին իրադարձութիւնների զարգացմանը, նրանց լուրջիւնը եւ բազմանշանակ էր եւ թափանցիկ: Այն ինչ ասուել էր Պոտսդամում, հաստատուն էր, սակայն կար մի կարեւոր հանգամանք՝ ինչ դիրք էին գրաւելու ԽՍՀՄ նախկին դաշնակիցները, եթէ խորհրդային զօրքերը ներխուժէին հայկական տարածքներ: Իսկ մինչ այդ, ԱՄՆ դեսպան Էդուին Վիլսոնը 1946թ. յունուարի 3-ին հանդիպում է Թուրքիայի ԱԳՆ գլխաւոր քարտուղար Ֆ. Զ. Էքքինի հետ, որպէսզի պարզի, լարուած իրավիճակը կարող է առիթ դառնալ, որ Թուրքերը հայերի նկատմամբ իրականացնեն բռնութիւններ եւ հալածանքներ, ինչը կ'արագացնէր խորհրդային գործողութիւնները: Թուրք պաշտօնեան արծարծուած հարցին պատասխանում է, որ չնայած «Անցած տարուայ մարտից աճող ճնշումը Միութեան կողմից Թուրքիայի վրայ բերեց այն բանին, որ մեր համերաշխութիւնն արդէն հատում է», *բայց վստահեցնում է,* «որ հայկական հասարակութեան դէմ որեւէ գործողութիւն չի արուի»[12]:

Դեռեւս 1945թ. յունուարի 18-ին Լոնդոնում կայացած ԱՄՆ-ի եւ Թուրքիայի արտաքին գործերի նախարարների հանդիպման ժամանակ քննարկուեց պատերազմի սկսման հնարաւորութեան խնդիրը: Թուրք պաշտօնեան բարդ ներկայացնելով իրավիճակը, յայտնում է. «Ես ձեզ ճշգրիտ տուեալներ չեմ հաղորդում, բայց այսօր զէնքի տակ է մօտ մէկ միլիոն մարդ: Պատերազմն աւարտուել է, սակայն կառավարութիւնը զօրացրում չի իրականացնում: Փոխանակ բանակի թիւը փոքրացնելու, մենք հնարաւոր է այն մեծացնենք:

Մենք չենք ուզում պատերազմի դրդրիչ հանդիսանալ, մենք յատկապէս խուսափելու ենք նման գործողութիւններից: Բայց թուրքական կառավարութիւնն ու ժողովուրդը չի են վճռականութեամբ՝

12 Նոյն տեղում, էջ 277:

հանդէս գալու ընդ դէմ, ով ուժով ցանկանում է վերցնել մեր հողերը»[13]:

Հանդիպումից յետոյ ծաւալուող իրադարձութիւնները գալիս էին հաստատելու, որ երեք տէրութիւնների ղեկավարները ոչ միայն չկարողացան հարթել աշխարհաքաղաքական նոր խընդիրները, լուծում չտուեցին երկրորդական ճանաչուած մի շարք հարցերի, այլեւ ուշադրութեան կենտրոնը տեղափոխեցին տարաձայնութիւնների խորացման հարթակ, աննահանջ չարունակելով թելադրողի, դրութեան տէր դառնալու մրցավազքը, ինչի արդիւնքում էլ բաց մնացած խնդիրները արդէն դառնում էին հրատապ լուծում պահանջող:

Այժմ արդէն, յատկապէս հայկական տարածքների հարցում, կար որոշակի ձեւաւորուած տեսակէտ: Այնուամենայնիւ, թերեւս զգալով, որ անարդար, հպանցիկ վճիռ է կայացուել, որ մէկերկու նիստում կարծիք կազմել խնդրի մասին հնարաւոր չէր, որ վճռորոշը գնահատուել է ԽՍՀՄ թաքուն նպատակները, փորձ էր արուել աւելի յստակեցնել հայկական պահանջների նկատմամբ վերաբերմունքը, որի վկայութիւններից մէկն էլ «Կարսի պայմանագրի մասին» (խօսքը 1921թ. հոկտեմբերի 13-ի պայմանագրի մասին է – Ց. Զ.) 1946թ. յունուարի 31-ին «Ֆ. Օֆիս»ի կազմած փաստաթուղթն է, որի նպատակը պայմանագիրը օրինական համարելն էր: Ներկայացնելով պայմանագրի քննութեանն առնչուած դիւանագէտների տեսակէտները, փաստաթուղթը յայտնում է, որ «թուրքերը ի վիճակի չեն դիմակայել ռուսական պահանջին», որ տարածքների նկատմամբ ռուսների հետաքրքրութիւնը կը չարունակուի եւ թէկուզ հաստատուի ժամանակաւոր լուծեան, բայց դա չի նշանակում պահանջից «վերջնական հեռացում»: Որպէս աստուածի ապացոյց փաստաթուղթը վկայակոչում է 1921թ. նոյեմբերի 22-ին Կ. Պոլսից ուղարկուած հեռագիրը, որը աւելի քան պարզեցնում է 1921թ. Կարսի պայմանագրի նկատմամբ վերաբերմունքը: Հեռագրի հեղինակ Գ. Ռումբոլդը գրում է. «Անգորայի կառավարութեան եւ կովկասեան երեք պետութիւնների միջեւ հոկտեմբերի 15-ին կարսում կնքուած համաձայնագիրը» *որոշակիօրէն լոյս են սփռում ստեղծուած իրավիճակի վրայ.* «թուրքերը կարծես թէ գերիշխող դեր են խաղացել եւ գրեթէ թելադրել են համաձայնագրի պայմանները... Նրանից հասել են Կարսի նկատմամբ իրենց իրաւունքի կա-

13 Նոյն տեղում, էջ 277-278:

տեգորիկ ընդունման, մինչդեռ ռուսները դեռ աճցեալ տարուայ վերջին ցանկանում էին վռնդել նրանց այդ տարածքներից, եւ թուրքերին յաջողուեց ոչ մի զիջում էլ չանել հայերին, անգամ երկրորդական հարցերում... Ոչինչ այնքան չի զարմացնում, որքան այս գործում ռուսների զիջողական եւ անգամ հաճոյանալու դիրքորոշումը: Դա ամենավերջին ապացոյցն է այն բանի, թէ որչափ կարեւորութիւն են նրանք տալիս բեմալականների հետ իրենց դաշինքին: Հիմք կայ ենթադրելու, որ Անգորան եւ Մոսկուան միմեանց խորը թերահաւատութեամբ են վերաբերւում, բայց միաժամանակ հիմք չկայ մտածելու, որ կարելի է նրանց պառակտութեան յոյս ունենալ, նախքան նրանք իրենց հաշիւները կը պարզեն արեւմտեան երկրների հետ... Ռուսներն անկասկած գտնում են, որ արժէ ժամանակաւոր զոհողութիւնների գնալ, որպէսզի չխօսկան Անգորայի օգնութեամբ առաջ բերեն արեւմտեան երկրների միջամտութիւնը, եւ որ վերջին հաշուով նրանք իրենք կարող են թուրքերին կոտրել եւ վերադարձնել այն, ինչ իրենց էր պատկանում»[14]:

«Կարսի պայմանագրի ստորագրման պահին դրութիւնը կարելի է կարճ բնութագրել հետեւեալ կերպ: Կարծես թէ թուրքերը ժամանակաւորապէս առաւել ուժեղ դիրքում են յայտնուել, չնայած դա, ինչպէս երեւում է, տեղի է ունեցել հէնց ռուսների մաքիաւելլիական ֆաղաքականութեան պատճառով: Այդ վիճելի տարածքները ռուսների տիրապետութեան տակ էին միայն սկսած 1878թ., երբ նրանք ստացան այդ տարածքները պարտուած թշնամուց ռազմական պարգեւատրման տեսքով: Վերջապէս ռուսներն իրենք, եւ մասնաւորապէս Ստալինի ղեկավարած ազգութիւնների գործերով զբաղուող կոմիսարիատը, յստակ յայտարարեցին, որ իրենք հիմնաւորուած էքսիկ պահանջներ չունեն վիճելի տարածքների վերաբերեալ: Այդ պատճառով կարելի է ասել, որ սովետական յայտարարութեան մէջ ճշտի մի մասն է միայն ընդգրկուած, եւ ոչ ամբողջը: Դրանում շատ բոյլ են երեւում այն համոզմունքները, որ նշուած տարածքները հարկադրաբար են զիջուել Թուրքիային եւ որ սովետական պահանջները հիմնաւորուած են էքսիկ պատկերացումներով»[15]:

Այնուհետեւ, նոյն խնդրի շուրջ հեղինակի 1946թ. մարտի 23-ի նամակում կարդում ենք. «Ձեր նամակում զետեղուած նիւթերը չեն բացայայտում ողջ պատմութիւնը: Կարսի եւ Արդահանի գաւառները դարեր շարունակ Թուրքիային էին պատկանում մինչեւ

14 Նոյն տեղում, էջ 278:
15 Նոյն տեղում, էջ 280:

1878թ., երբ այն ստիպուած եղաւ զիջել դրաւիճ Ռուսաստանին որպէս պատերազմի արդիւնքում ձեռք բերուած տարածքներ: Ճիշտ է, որ Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը Ռուսաստանին հարկադրուել էր ժամանակաւորապէս հզօր Գերմանիայի եւ նրա դաշնակիցների կողմից, եւ ըստ այդ պայմանագրի Ռուսաստանը պարտաւոր էր վերադարձնել Թուրքիային այն երկու գաւառները, որոնցից վերջինս ստիպուած զրկուել էր դրանից ֆառասուն տարի առաջ: Բայց կարեւորն այստեղ այն է, որ սահմանի հարցը վերջնականապէս չէր լուծուել նախքան 1921թ. սովետական եւ կովկասեան հանրապետութիւնների կառավարութիւնների միջեւ մի կողմից, եւ Քեմալ Աթաթուրքի թուրքական կառավարութեան միջեւ միւս կողմից Մոսկուայի եւ Կարսի պայմանագրերի կնքումով: Այս անգամ արդէն չկար գերմանական ճնշումը, այդ պայմանագրերը կնքուեցին ազատ բանակցութիւնների արդիւնքում: Այս նկատի ունէի, երբ ասացի, որ «Թուրքիայի եւ Ռուսաստանի միջեւ սահմանը հաստատուել էր ոչ թէ զաւթարարի կողմից, այլ պարտուած Թուրքիայի եւ դժբախտ Ռուսաստանի, որը ոչ այնքան լաւ վիճակում էր եւ իր սեփական մեղքով դուրս էր եկել նախորդ պատերազմից: Այդ պատճառով չի կարելի ասել, որ այդ սահմանը պարտադրուել է»[16]:

«Ինչպէս ես նշեցի, գեներալիսիմուս Ստալինը ինքն է մասնակցել սահմանի հաստատման բանակցութիւններին, եւ այդ ժամանակուայ սովետական պաշտօնական հրատարակութիւններում կրկին յայտնուել էր յայտարարութիւն այն մասին, որ Սովետական Ռուսաստանը չի կարող արդարացնել թուրքական երկու գաւառները վերադարձնելու փորձը նրանով, որ հայերը ազգային առումով միշտ այնտեղ ներկայ են եղել»[17]:

Փաստաթուղթը, ինչպէս տեսնում ենք, չափազանցութիւն չէր: Այն իրականութեան արտացոլումն էր, իրականութիւն, երբ համաշխարհային յեղափոխութեան ասպետ բոլշեւիկները Հայկական հողերը որպէս կաշառք տալով Թուրքիային, յոյս ունէին, որ փլուզումից փրկելով թուրքական կայսրութեանը, Մուստաֆա Քեմալին կը դարձնեն իրենց յեղափոխական ընկերը եւ մուսուլմանական աշխարհը կը ներգրաւեն միջազգային իմպերիալիզմի դէմ պայքարի մէջ:

Բոլշեւիկեան մտածողութիւնը չիրականացաւ, Թուրքիան խլուեց ռուսական ազդեցութիւնից, վերածուեց ԽՍՀՄ-ի դէմ

16 Նոյն տեղում:
17 Նոյն տեղում, էջ 279-280:

ռազմական յենակէտի, 1941-1945 թթ. ԽՍՀՄ-ին ստիպեց զգալի զինուորական ուժ առանձնացնել հարաւային սահմաններուն, դրբանով իսկ թեթեւացրեց գերմանական խմբաւորման հոգսը, ապա արագօրէն, Թեհրանի հանդիպումէն յետոյ, կերպարանափոխուեց, յստակեցրեց իր կողմնորոշումը, դարձաւ հակագերմանական խմբաւորման անդամ, յոյս ունենալով պաշտպանել իր տարածքային ամբողջականութիւնն ու նորանոր գրաւտներ կորզել Արեւմուտքէն, միաժամանակ ծուռ հայելու մէջ ներկայացնելով խլուած հայկական տարածքների խնդիրը, այն համաձայնեցրեց ԱՄՆ-ի եւ Անգլիայի տեսակէտներուն ու կատարուած փաստի առջեւ կանգնեցրեց ԽՍՀՄ-ին, որը առաջինը բարձրացնելով հայկական տարածքների խնդիրը, փորձում էր Թուրքիային ստիպել հեռանալ Արեւմտեան կողմնորոշումից, ենթարկուել ԽՍՀՄ հեռուն գնացող ծրագրերին: Սակայն, Պոտսդամից էլ առաջ արդէն կանխորոշած էին յետագայ իրադարձութիւնները եւ որեւէ փոփոխութիւն ակնկալելը հաւասար էր նոր պատերազմի բռնկման: Բացի այդ, նախկին դաշնակիցները խորամանկօրէն օգտագործեցին ներմուծուած, արհեստականօրէն ձեւաւորուած վրացական պահանջները, գործունէութեան ազատ տարածքներ ապահովելով յետագայ իրադարձութիւնների տեսակէտների ձեւաւորման համար, որի վերջնական խօսքը վերապահուեց Չերչիլին: Նա 1946թ. մարտին յայտարարեց. «Խորհրդային Միութեան Կարս-Արտահանի եւ նեղուցներուն համաձայնագիրին վերանայման պահանջը ոտնձգութիւն է Թուրքիոյ ամբողջականութեան դէմ»[18]:

Այս եւ յարակից նոր խնդիրների վերլուծութեանն էր նուիրուած 1946թ. ապրիլի 4-ին թուագրուած նոյն գրասենեակի բացատրութիւնները, որոնք այս անգամ վերնագրուած էր «Թուրքական տարածքների վերաբերեալ հայկական եւ վրացական պահանջները» *անունով:*

Հեղինակը կրկնելով նախորդ բացատրութիւնները, նշում է, որ վրացական դիրքորոշումները հակասում են «հայկական պահանջին», *աւելին, հայերը իբր այժմ պահանջում են նաեւ Սեւրի պայմանագրի իրականացում,* «նախագահ Վիլսոնի Հայաստանը»:

«Եթէ անգամ այդ մեծ պահանջը առաջ է քաշում թէկուզ Կարսից, Արդահանից եւ Արդուինից շատ աւելի փոքր տարածք ձեռք բերելու նպատակով, միեւնոյն է թուրքերը շատ ֆիչ երաշխիք

18 «Արարատ» օրաթերթ, Պէյրութ, 9 օգոստոս, 1974, էջ 2:

ունեն, որ բչին հասնելով, Ռուսաստանը յետագայում առաւել մեծ պահանջներ չի ներկայացնի: Նախագահ Վիլսոնի առաջարկած ծրագրի իրականացումը կը նշանակի, որ թուրքերը կը կորցնեն իրենց երկրի մէկ հինգերորդ մասը: Նրանք անկասկած կը պայքարեն դա թոյլ չտալու համար

Անխոհեմ կը լիներ նաեւ չարաշահել տարածքային ընդլայնման պահանջի հիմնաւորուածութիւնը հայերի հանդէպ թուրքերի գործադրած կոտորածների արդիւնքներով: Այդ կոտորածն այնքան դաժան էր եւ համաշխարհային հասարակական կարծիքի վրայ այնպիսի անջնջելի հետք է թողել, որ եթէ սովետական կառավարութիւնը որոշի պրոպագանդիստական արշաւ ծաւալել, դա կարեկցողների զանգուածներ առաջ կը բերի ողջ աշխարհի տարբեր շրջանակներում եւ Թուրքիային՝ որպէս համար մէկ սեւ ագռաւ, բաւականին անյարմար դրութեան մէջ կը դնի

Սովետական մամուլում մշտապէս նշւում է Սովետական Միութեան ռազմական ուժերում վրացիների ներդրումների մասին, ինչպէս ռազմաճակատում, այնպէս էլ թիկունքում: Բայց մինչ 1945թ. վերջը ակնարկներ չկային այն մասին, որ վրացիներին անհրաժեշտ էր կամ որ նրանք պահանջում էին թուրքական տարածքներ: Լազիստանը նրանց համար երբեք ցանկալի չի եղել: Չի կարելի պնդել, որ արեւմտեան երկրները խախտել են վրացիներին տրուած որեւէ խոստում:

Ինչպէս վրացիները, հայերը նոյնպէս իրենց պահանջները հիմնաւորում են արդարութեան սկզբունքով: Աւելի օգտակար կը լիներ գտնել այն հարցի պատասխանը, թէ արդեօք այդ պահանջների բաւարարումը բխում էր նրանց շահերից: Ինչպէս երեւաց վերը, ներկայումս Հայաստանը կամ Վրաստանը ընդհանրապէս լրացուցիչ տարածքների կարիք չունէին, Հայաստանին դա պէտք չէր լինի անգամ եթէ մի բանի հարիւր հազար հայ վերադառնային արտասահմանից:

Այժմ սխալ եւ անխոհեմ է համարւում թոյլ տալ, որ հայերի պատմական պահանջները եւ անգամ վրացիների առաւել կասկածելի պահանջները, օգտագործուեն Սովետական Միութեան շահերի համար: Ամէն դէպքում, եթէ Սովետական Միութիւնը պահանջի, որ վրացիներին յատկացուի իրենց պահանջած տարածքը, նա հազիւ թէ կարողանայ պնդել, որ այդ նոյն տարածքը պէտք է անցնի նաեւ Հայաստանին»[19]:

19 Армения..., էջ 281-292, 293:

Համաճայն չարադրանքի, թուրքերը Արդուինն ու Արդահանը գրաւել են 1580թ. եւ մինչեւ 1878թ. մնացել է թուրքերի տիրապետութեան տակ: Այնուհետեւ, ելնելով նախաձեռնութեան պահանջից, հեղինակը տալիս է նաեւ վրացիների մասին հակիրճ տեղեկութիւն. «Վրացիները որպէս ազգ գոյութիւն ունեն 2000 տարի: Նրանց նախնական հայրենիքը, երեւում է, գտնուել է այսօրուայ Թբիլիսի շրջանում, իսկ նրանց առաջին մայրաքաղաքը, Մցխեթի հարեւանութեամբ»: *Ապա յայտնում է, որ վրացիները քրիստոնէական հաւատի են, եւ այդ պատճառով ենթարկուել են արշաւանքների: Իսկ Թամար թագուհու ժամանակ, երբ վրացիներին յաջողուեց* «կարճ ժամանակով» *իրենց իշխանութիւնը տարածել Կարսի, Ախալթի վրայ (խօսքը Զաքարեանների իշխանութեան մասին է – Ց. Զ.), սակայն վրացիների իշխանութիւնը երբեք չի հասել հեռաւոր հարաւ, որպէսզի* «գրաւէին Էրզրումը, Բայբուրդը կամ Տրապիզոնը»[20]:

Այս կարեւոր չեշտադրումը արւում էր այն պատճառով, որ ապացուցուի վրացիների պահանջի չինծու լինելը, որպէսզի մերժուեն հայկական տարածքների նկատմամբ վրացական պահանջները:

Նորից անդրադառնալով Կարսի, Արդահանի ճակատագրին, հեղինակը նոր վկայութիւն է ներկայացնում, որ այդ հարցում վճռորոշ է եղել Ստալինի կարծիքը: Ազգութիւնների ժողովրդական կոմիսարը յայտարարում է, որ Կարսն ու Արդահանը չպէտք է կռւանխնձոր դառնան Թուրքիայի հետ յարաբերութիւններում, որ «բնակիչների 67%-ը մուսուլման են եւ որ Հայաստանի համար Թուրքիայի դէմ պատերազմը կը շարունակուի, որ ռուսական կոմունիզմը – դա ուրիշ ոչինչ չէ, բաւ թաքնուած ռուսական իմպերիալիզմ»[21]:

Ժողովուրդների ազատութեամբ մտահոգուած բոլշեւիզմը, թէկուզ զգալի տարածքային կորուստների գնով պէտք է իրականացնէր իր դարակազմիկ ծրագիրը՝ կոմունիստական հասարակարգի կառուցումը, հաւասարութեան, եղբայրութեան սկզբունքների իրականացումը: Այդ վեհ գաղափարները ազգային, սահմանային խնդիրների մասին մտածելու ժամանակ չէին յատկացնում 20-րդ դարի ասպետներին: Ահա թէ ինչու, ինչպէս նշում է փաստաթղթի հեղինակը, 1921-1945 թթ. սահմանների

20 Նոյն տեղում, էջ 282:
21 Նոյն տեղում, էջ 286:

մասին որեւէ պահանջ, յիշատակութիւն չի արուել: Հակառակը, ԽՍՀՄ 1925թ. Թուրքիայի հետ կնքել է բարեկամութեան պայմանագիր, այն երկարաձգել 1929–1935 թուականներին եւ միայն 1945թ. որոշել փոփոխութեան ենթարկել[22]:

Այստեղից էլ, ըստ հեղինակի, տարօրինակ է թուում, որ ԽՍՀՄ-ը բարձրացնում է այդ խնդիրը: Ցաղթող տէրութիւնները ձգտելու էին ազդեցութեան նոր շրջանների հաստատմանը: Եւ ահա, Հայկական հարցը, որը բարձրացրել էին սփիւռքահայ կազմակերպութիւնները սկուտեղի վրայ մատուցւում է ԽՍՀՄ-ին: Ստալինը չէր կարող անարձագանք թողնել նման հնարաւորութիւնը, որովհետեւ նրան թւում էր, թէ համեղ պատառ է բաշխւում ԽՍՀՄ-ին եւ անհրաժեշտ է օգտագործել պատեհ առիթը եւ ընդարձակել նաեւ Վրաստանը:

Կարսի ու Արդահանի խնդիրը բարձր մակարդակով քննարկուեց նաեւ Լոնդոնում, 1945թ. սեպտեմբերին, ՄԱԿ-ի Անվտանգութեան խորհրդի հինգ մշտական անդամ երկրների ԱԳՆ խորհրդակցութեան ժամանակ: Վ. Մոլոտովը նորից կրկնեց ԽՍՀՄ պահանջը, բայց այն թէեւ մնաց անարձագանք, սակայն ԱՄՆ պետքարտուղար Ջ. Բեօրնսը իր յուշերում գրում է, «թէ Մոսկուայի կառավարութիւնն աւելի շատ պզտիկ զիջումներ պիտի ընէ Պալթեաններու մէջ, բայց երբեմ տեղի պիտի չտայ ընդուցներու եւ Կարս-Արտահանի խնդրի մէջ»[23]:

Պոտսդամում հայկական տարածքների խնդիրը բարձրացուել էր, ինչպէս ցոյց են տալիս փաստաթղթերը, յանպատրաստից, առանց դաշնակիցների հետ նախօրօք կազմակերպուած քննարկումների, հապճեպօրէն, որովհետեւ ԽՍՀՄ-ը մտածում էր, որ խնդիրը դրական լուծում կը ստանայ ԱՄՆ կողմից եւ անհամեմատ կը բարձրանայ նրա հեղինակութիւնը առաջադէմ մարդկութեան շրջանակներում, ուստի օգտագործելով սովետա-թուրքական 1935թ. պայմանագրի ժամկէտը լրանալու, այն երկարաձգելու պատեհ առիթը, խորհրդային կողմը նպատակայարմար գտաւ որպէս պայմանագրի երկարաձգման երաշխիք պահանջել Կարսի, Արդահանի, Արդուինի վերադարձը, կամ ինչպէս ընդունուած է ասել, վերականգնել մինչեւ 1921թ. սովետա-թուրքական սահմանը:

---

22 Նոյն տեղում:

23 Զարթօնք, 5 դեկտեմբերի, 1967:

Խորհրդային կողմը լիայոյս էր, որ Թուրքիան կ'ընդունի պահանջը, քանզի պատերազմի տարիներին Թուրքիայի պահուածքը ենթական էր համապատասխան վերաբերմունքի եւ Թուրքիան պատժից խուսափելու համար լրելեայն կը համաձայնուէր: Բայց կատարուեց բոլորովին հակառակը: Թուրքիան ոչ միայն մերժեց նեղուցներում բազա տրամադրելու, այնպէս էլ տարածքային զիջումների պահանջը:

Անտրամաբանական էր նաեւ խորհրդային կողմի յաջորդ նորամուծութիւնը, երբ որոշ ժամանակ անց, պահանջատէր կողմ ներկայացուեց նաեւ Վրաստանը:

Փաստօրէն խորհրդային կողմը քանի դեռ չէր լուծել հայկական արդարացի պահանջների հարցը, առանց պատմական հիմքի մէջտեղ բերեց երրորդ կողմին, որն էլ, առաւել քան, հեղինակազրկեց հայկական պահանջը, ստեղծելով խնդրի առկախ թողնելու հնարաւորութիւն:

ԽՍՀՄ-ը թէեւ անուշադրութեան չէր թողնում 1942թ. Ցեւտոյ սկսուած առաջատարութեան համար պայքարը, եւ ԱՄՆ-ի ու Անգլիայի հետ վիճարկում էր պատերազմում գլխաւոր դերակատարի խնդիրը, այնուամենայնիւ, երկրորդ ճակատի բացումից յետոյ, յայտնուեց սահմանափակ չրջանակում, որովհետեւ դաշնակիցները անպիղում պայքար էին ծաւալել, որպէսզի ԽՍՀՄ-ին զրկէին կենտրոնական Եւրոպայում կոմունիստական վարչակարգեր հաստատելու հնարաւորութիւնից:

Դեռեւս չլուծուած էր մնում Արեւելեան Եւրոպայի խնդիրը: Դաշնակիցները առայժմ լուռութեան էին մատնում ԽՍՀՄ ձեռնարկներն ու նշուած տարածաչրջաններում իրականացուող քաղաքականութիւնը եւ անլեզալ աչխատանքներ էին տանում այդ երկրներում հակախորհրդային ուժերի համախմբման եւ արհեստականօրէն կայացրած պետական կարգերը տապալելու ուղղութեամբ:

Սրանք եւ Աֆրիկեան տարածաչրջանի, Լիբանանի, Իրանի, Սիրիայի, Թուրքիայի խնդիրները դեռեւս պէտք է քննարկուէին: Սակայն բացակայում էին ընդհանուր տեսակէտներ մչակելու ցանկութիւնները:

Վերջին հաչուով ստեղծուել էր չափազանց բարդ ու պայթունավտանգ, քօղարկուած իրավիճակ: Երեք երկրների ղեկավարները անհանդուրժողական էին միմեանց նկատմամբ, քաղաքավարութեան առերես դրսեւորումներով ծածկելով հակասու-

digitised by

թիւնները, փաստօրէն խոչընդոտներ էին ստեղծում վերջնական վճիռների կայացման հարցում:

Այդ տարաձայնութիւնները առաչօք դարձան ատոմային ռումբի փորձարկումից յետոյ, երբ բանակցութիւնների ոլորտ տեղափոխուեց ուժի դիրքի քաղաքականութիւնը:

Հերոսիմայի եւ Նագասակի ատոմային ռմբակոծութիւնները ծրագրուած էին աւելի վաղ, սակայն խուսափելով աւելորդ լարուածութիւնից, Տրումենի յանձնարարութեամբ, այդ գործողութիւնը յետաձգուեց Պոտսդամից յետոյ, երբ կանխատեսումների համաձայն, իրականացնելով ատոմային յարձակումը ԱՄՆ-ին վերապահուելու էր գերտէրութեան եւ թելադրողի կարգավիճակ: Ռմբակոծութիւնները, յատկապէս թուրքական հարցում փոխեցին նաեւ խորհրդային արտաքին քաղաքականութեան ուղղութիւնները:

Լսելով ռմբակոծութիւնների մասին տեղեկութիւնը, Ստալինը Քաղբիւրոյում յայտարարում է. «Արշաւանքը դէպի Ստամբուլ յետաձգւում է մինչեւ լաւագոյն ժամանակներ: Իսկ թուրքերը թող յաւերժ շնորհակալ լինեն ճապոնացիներին, որոնք նրանց համար ինքնազոհաբերուեցին»[24]*:*

Թուրքիային էր «ինքնազոհաբերում» նաեւ ԱՄՆ-ը, որի նախագահ Տրումենի անունով հրապարակուած դոկտրինան Ցունաստանի եւ Թուրքիայի տարածքային ամբողջականութեան երաշխաւորագիրն էր: Դոկտրինայի հեղինակը ԱՄՆ կոնգրէսում յայտարարեց. «... եթէ այս ճակատագրական ժամին Ցունաստանին եւ Թուրքիային օգնելու հարցում յապաղենք, ապա դրա ազդեցութիւնը խորը պիտի լինի թէ՛ Արեւմուտքի, եւ թէ՛ Արեւելքի համար»[25]*: Իր «առաստաձեռնութեամբ» աչքի էր ընկնում նաեւ ԱՄՆ կոնգրէսը, երբ արտաստահմանեան բարեկամներին յատկացուելիք 400 միլիոն դոլարի օգնութիւնից 100 միլիոնը բաժին էր հասնում Թուրքիային: Թուրքիայի նկատմամբ հոգատարութիւն էր դրսեւորում նաեւ Մարշալի ծրագիրը:*

կարծես ներկայացուած մտքի հանրագումարն էր Թուրքիայի ԱԳ նախարարի 1946թ. ապրիլի 14-ի ելոյթը մէջլիսում: Վերադառնալով Եւրոպայից, նախարարը յայտնում է, որ Թուր-

---

24 АТАМАНЕНКО И., *Не нужен нам берег турецкий*, "Независимая газета", 2008, 8 августа.

25 *Public papers of the Presidents of the United States: Harry Truman*, 1947, Washington D.C.U.S. Government Printing Office, 1963, pp. 173.

քիան մտացածին չընդդրկուեց ՄԱԿ-ի որեւէ յանձնաժողովում, որովհետեւ խուսափեց Անգլիայի կամ ԽՍՀՄ թելադրանքները կատարելուց, պահպանելով իր արժանապատուութիւնը։ Այնուհետեւ անհամբեր հայրենակիցներին հանգստացնելու նպատակով, յայտարարում, որ թէ նեղուցների, թէ տարածքային այլ պահանջների դէպքում Թուրքիան միայնակ չի լինի, Ռուսաստանի ցանկացած քայլի դէմ ԱՄՆ ու Անգլիան լուրջ վերաբերմունք ցոյց կը տան։ Ներկաներին հաւաստիացնելով այդ հարցում, նախարարը աւելացնում է, որ ԱՄՆ եւ Մեծ Բրիտանիայի հետ յարաբերութիւնները զարգանում են «բարեյաջող»[26]։

Թուրքական թերթերի հրապարակումների մասին հետաքրքիր վերլուծութիւններ է կատարում Ստամբուլի խորհրդային դեսպանատունը։ Նչելով այն թերթերի անունները, որոնք առաւել ընթերցուող են իրենց հումորային, ժողովրդական ասոյթների պատճառով, վերլուծաբանը ընդգծում է, որ հէնց այդ թերթերն են, որ ներկայ պահին փոխելով իրենց ուղղուածութիւնը, սկսել են տպագրել քաղաքական յօդուածներ, որոնց օգնութեամբ հակառուսական ու հակախորհրդային կարծիքներ են ձեւաւորում։ Յօդուածները մեծաւ մասամբ կեղծելով իրականութիւնը, խառնիխուռն ներկայացնելով միջազգային իրադրութիւնը, ընթերցողների ուշադրութիւնը հեռացնելով ներքին խնդիրներից, քարոզում են Թուրքիային սպառնացող վտանգի, նոր պատերազմի բռնկման հնարաւորութեան մասին։

Աւելին, գրում էր թերթերից մէկը, «բոլոր թուրքերը պէտք է աչալուրջ լինեն եւ ցանց պայմաններում յենուեն միայն Անգլիայի եւ Ամերիկայի Միացեալ Նահանգների վրայ, որպէսզի հնարաւոր լինի պահպանել իրենց անկախութիւնը»[27]։

ԽՍՀՄ-ի դէմ ծաղրանկարներով, վիրաւորական արտայայտութիւններով լեցուն այդ թերթերը ժողովրդին կոչ էին անում միաւորուել աշխարհի միւս ժողովուրդների հետ եւ Անգլիայի ու ԱՄՆ-ի ղեկավարութեամբ արժանի պատասխան տան «մաֆուր երկնքում սեւ ամպ հանդիսացող» ԽՍՀՄ-ին, «Մոսկուացի Քեռուն», *որին քեռի Թոմը այնպիսի հարուած կը հասցնի, որ նա երկար ժամանակ ուշքի չի գայ*[28]։

---

26 ՀՀ ՀՔԿՓ ԿԸ ՊԱՑ, ֆ. 1, ց. 26, գ. 47, թ. 99, 100։
27 Նոյն տեղում, թ. 266-277։
28 Նոյն տեղում։

Թուրքական թերթերը ձայնակցելով անգլո-ամերիկեան լրատուամիջոցներին, ի լուր յայտարարում էին, որ ԽՍՀՄ-ը, որ բոլշեւիկացրել է Եւրոպայի զգալի հատուածը, այժմ նախկին դաշնակիցներից պահանջում է զօրքերը դուրս բերել Իտալիայից, որպէսզի այնտեղ եւս իրականացնի իր ծրագրերը։

Լարուած միջազգային իրադրութիւնը, ուժերի նոր տեղաբաշխումը, հակասութիւնների սրումը նոր խոչընդոտներ էին ստեղծելու այն ժողովուրդների համար, որոնք ենթարկուել էին բռնադատումների, նրանց զրկելով իրենց հարցի արդարացի լուծման ակնկալիքներից։ Աչխարհը դանդաղ երկբեւեռ էր դառնում, որի պայմաններում ոչ նորաստեղծ ՄԱԿ-ը, ոչ հասարակական կարծիքը անկարող էին սատար կանգնել փոքր ժողովուրդներին։

Գրեթէ նոյն կարծիքին էին միջազգային լրատուամիջոցները, որոնք իրենց տեսակէտներն էին յայտնում հայկական հողերի վերաբերեալ։ Նրանք հողային պահանջները համարում էին ԽՍՀՄ հնարքներից մէկը։ Այդ առթիւ 1945թ. օգոստոսի 7-ի համարում «Նիւ-Եորք Թայմսի» Անկարայի թղթակից Բրիւսերի վկայութեամբ ամբողջ Մերձաւոր Արեւելքում ԽՍՀՄ-ը հովանաւորում ու ոգեւորում է հայկական ազգայնական տրամադրութիւնները[29]*։*

1945թ. դեկտեմբերին «Ռոյտեր» գործակալութեան Բուդապեշտի թղթակիցը հաղորդագրութիւն է տարածում այն մասին, որ Թուրքիայի վրայ իր ազդեցութիւնն է թողնում հայկական քարոզչութիւնը, որը ուղղուած է Թուրքիայի հիւսիս արեւելեան նահանգները Սովետական Հայաստանին միացնելու նպատակին։ Ապա թղթակիցը արտայայտելով ընդհանուր կարծիքը, յայտնում է, թէ նման պահանջը նպատակ ունի Թուրքիային ստիպել նեղուցներում բազա տեղադրելու, տարածքները զիջելու եւ ներքին կարգերի փոփոխութիւն իրականացնելու։ Ցօդուածագիր տեսաբանը յայտնում է, որ ներկայացուած տեսակէտը համընկնում է Թուրքերի կարծիքին[30]*։*

Այնուհետեւ մեկնաբանը տեղեկացնում է, որ տարբեր երկրների մի շարք լրատուամիջոցներ գրեթէ նոյն կարծիքին են։ Կան նաեւ այլ տեսակէտներ։ Օրինակ «Նիւ-Եորք Թայմսը» գրտնում է, որ ԽՍՀՄ ցանկանում է վերականգնել յեղափոխութեան եւ քաղաքացիական պատերազմի պատճառով խախտուած սահ-

29 Նոյն տեղում, թ. 161:
30 Նոյն տեղում, թ. 162:

մանները, որ նշուած չրջանները ոչ Թուրքիայի, ոչ էլ ԽՍՀՄ-ի համար մեծ նշանակութիւն չունեն։ Բացի այդ, յիշեցնում է թերթը, ԽՍՀՄ-ը մտադիր է վերանայել ամբողջ սահմանը[31]։

Նոյն թերթի մէկ այլ թղթակից գտնում է, որ աւելի վտանգայարոյց է համարում տարածքային պահանջները, վտանգայարոյց այնքանով, որ մեծացնում են պատերազմի բռնկման հնարաւորութիւնը[32]։

Հունգարական «Նեպսաւա» թերթը գտնում է, որ Թուրքիան անհանգիստ է տարածքների պահանջի հարցում, որովհետեւ կարսն ու Արդահանը ռազմավարական նշանակութիւն ունեն կովկասի համար[33]։

«Նիւ-Եորք Թայմսի» վերլուծաբանը անդրադառնալով թուրքական մամուլին, գտնում է, որ դրանք հիմնականում զբաղուած են հակախորհրդային կարծիքի ձեւաւորման, ԽՍՀՄ նկատմամբ «սուտ եզրակացութիւններ» տարածելով, եւ ամենակարեւորը պնդում են, որ այդ տարածքները հանդիսանում են թուրքական հողեր[34]։

Բնական է, որ ամերիկեան մամուլը խորհրդային պահանջները գնահատելով որպէս կենդանացած ռուսական իմպերիալիզմի զաւթողական քաղաքականութեան չարունակութիւն, կանգնելու էր Թուրքիայի պաշտպանութեան դիրքերում[35]։

Անգլո-ամերիկեան թուրքամէտ դիրքորոշմանը հակառակ, առաջադէմ չատ գործիչները, որոնք ծանօթ էին Հայոց պատմութեանն ու 1915թ. ցեղասպանութեանը, պաշտպանում էին տարածքներն իրենց օրինական տէրերին՝ հայերին, վերադարձնելու տեսակէտը։

Անգլիացի հոգեւորական Ջոնսոնը, որը էջմիածնում ներկայ էր եղել Ամենայն հայոց կաթողիկոսի ընտրութեանը, 1945թ. յունիսի 28-ին վերադառնալով հայրենիք, մամուլի ասուլիսում յայտարարում է. «Ես ամբողջ սրտով համաձայն եմ, որ Թուրքիայի բռնակցած մարզերը պէտք է, ինչքան հնարաւոր է շուտ, վերադարձուեն Հայաստանին»[36]։

---

31 Նոյն տեղում։
32 Նոյն տեղում, թ. 163։
33 Նոյն տեղում, թ. 163-164։
34 Նոյն տեղում, թ. 163։
35 Նոյն տեղում, թ. 164, 166։
36 Նոյն տեղում, թ. 166։

1945թ. մարտի 20-ին «Իմանիտէ» թերթում տպագրուեց ժամանակի ֆրանսիացի յայտնի քաղաքականագէտ Ֆրանսուա Պոնսեննի յօդուածը, որտեղ նա այն միտքն է յայտնում, որ տարածքային պահանջները միջոց են միջերկրածովեան աւազանում տիրապետութեան հաստատման համար, որի առաջին փուլը Կարսին եւ Արդահանին տիրանալն է. «Իրականում Կարսի եւ Արդահանի հարցը հրատապ է. Բայց դրանում ԽՍՀՄ-ի ոչ մի զաւթողական ձգտում չկայ: Ինչպէս օրինակ ոչ մի ֆրանսիացու գլխում չի յայտնուի էլզասի եւ Լոթարինգիայի հարցում «տիրել» կամ «վերամիաւորել» մտքերը, հակառակ նրա, որ ասուի մայր հայրենիքին օրինական վերադարձնելու մասին»[37]:

Յօդուածին անդրադարձ կատարող մեկնաբաններից մէկը զարմանք է յայտնում, որ նման ճանաչուած քաղաքագէտը պէտք է գիտենայ, որ Կարս եւ Արդահան մարզերը կազմում են Հայաստանի եւ Վրաստանի անբաժան մասերը (որ էրզրումը նոյնպէս հանդիսանում է Հայաստանի գլխաւոր քաղաքներից մէկը)[38]:

Այնուհետեւ, «Իմանիտէի» մեկնաբանը հակիրճ տեղեկութիւններ է հաղորդում Թուրքիայում հայկական կոտորածների մասին եւ ընդգծում, որ «այսպէս կոչուած փոքր ազգերի պաշտպանները լռում են այդ պատմական ու ժողովրդագրական փաստերի առթիւ»[39]:

Տարածքային խնդիրների շուրջ «Հայերը եւ նրանց պահանջները» վերնագրով Մարսելի «Մարսելիեզ» թերթում հանդէս է եկաւ Անրի Վերնոն: Հեղինակը, պատմական, աշխարհագրական, ժողովրդագրական փաստերի հիման վրայ ապացուցում է, որ հայերի պահանջները արդարացի են[40]:

Ամերիկացի ռադիոմեկնաբան Ստիլը 1945թ. դեկտեմբերի 22-ին հաղորդման ժամանակ յայտնում է, որ խորհրդային պահանջները ամբողջովին համապատասխանում են ազգաբանական ու քաղաքական տեսակէտներին[41]:

Եգիպտոսում ֆրանսերէն տպագրուող «Լա Բուրս Էժիպսիեն» թերթի խմբագիր Լիւդոլը «Հայ ժողովրդի նոր արշալոյսը» յօդուածում ընդգծում է, որ հայ ժողովրդին հասցուած անթիւ

---

37 Նոյն տեղում, թ. 166, 167:
38 Նոյն տեղում, թ. 168:
39 Նոյն տեղում:
40 Նոյն տեղում:
41 Նոյն տեղում:

վիրաւորանքները պէտք է ստիպեն նոր Թուրքիային ընդառաջ գնալ պահանջներին։

«Հայ ազգը,- գրում է յօդուածագիրը,- պէտք է վերածնուի իր նախնիների երկրում»[42]։

Ինչքան էլ զարմանալի է հայամէտ դիրքորոշմամբ հանդէս եկաւ նաեւ Լոնդոնի «Էկոնոմիստ» հանդէսը։ Նրա 1945թ. դեկտեմբերի 28-ի տպագրած «Կովկասեան շախմատային տախտակ» յօդուածը յայտնում է, որ ԽՍՀՄ ձգտում է Թուրքիայի հետ սահմանների վերանայման եւ Իրանի վրայ իր ազդեցութեան տարածման, չմոռանալով յիշեցնել Բաքուի նաւթի, Հայաստանի, Վրաստանի եւ Ադրբեջանի բարգաւաճման մասին, ինչը հնարաւորութիւն է տալիս արտերկրի հայերին ու ադրբեջանցիներին (խօսքը իրանական Ատրպատականի ադրբեջանցիների մասին է – Յ. Զ.) այդ երկրները համարել իրենց հայրենիքը։ Յօդուածը թէեւ հպանցիկ է անդրադառնում Իրանում տեղաւորուած, քոչուորական կեանքով ապրող ադրբեջանցիներին, սակայն լուրջ ահազանգ է այն մասին, որ ԽՍՀՄ-ը այս փաստը եւս կ'օգտագործի Իրանի վրայ ճնշումը ուժեղացնելու համար։

Անդրադառնալով հայ-թուրքական սահմանի վերանայմանը, «Էկոնոմիստը» գտնում է, որ այն հեշտ լուծուող խնդիր չէ։ Ընդգծելով հայկական սփիւռքի վճռական դերակատարութիւնը, հեղինակը գտնում է, որ հայկական պահանջների թոյլ կողմը մնում է Արեւելեան Թուրքիայում հայերի փոքրամասնութիւնը[43]։

Սկանդինաւեան երկրները եւս անմասն չէին հայկական տարածքների վերադարձի խնդրի մեկնաբանութիւններից։ Ցայս ներկայացուած տեսակէտները արտայայտում էին պատմական ճշմարտութիւնը վերականգնելու, առաւել եւս ԽՍՀՄ թաքուն ծրագրերը բացայայտելու նպատակները։ Նորվեգական «Ադրբեյդերբլադէտա» թերթը գտնում է, որ հայկական պահանջները ոչ մի կապ չունեն նեղուցների խնդրի հետ, որ հայերը ցանկանում են ետ ստանալ այն, ինչը խլուել է նրանցից[44]։

Անդրադարձ կատարելով Թուրքիայի դիրքորոշմանը, թերթը գտնում է, որ այն դաժան հաշուեյարդարը, նորագոյն պատմութեան «այդ գազանութիւնները», Թուրքերին իրաւունք չի տա-

---

42 Նոյն տեղում, թ. 169:
43 Նոյն տեղում, թ. 169-170:
44 Նոյն տեղում:

digitised by

լիս հրաժարուել Վրաստանի եւ Հայաստանի հետ սահմանները վերանայելու պահանջից։ Աւելին, Թուրքիան, որ վերջին տարիներին առաջընթաց է գրանցել, այնուամենայնիւ թուրքական ազգայնամոլութիւնը մնում է որպէս տարածաշրջանում քաղաքական անհաւասարակշռութեան պատճառ[45]։

Մեկնաբանը այդուհետ յիշեցնում է, որ Ֆինլանդական թերթերից մէկը եւս անդրադարձել է խնդրին եւ իբրեւ եզրակացութիւն նշում, որ անգամ հակախորհրդային դիրքորոշում ունեցող երկրներն ու լրատուամիջոցները գտնում են, որ հայկական պահանջները հիմնաւորուած են։ Իսկ ամերիկեան ճանաչուած ռադիոմեկնաբան Ռեյքս Միլլերը քննադատելով ԽՍՀՄ քաղաքականութիւնը Իրանում, Աֆղանստանում, Արեւելեան Եւրոպայում, գտնում է, որ Հայկական հարցում «խորհրդային կառավարութիւնը հանդէս է գալիս ճիշտ»[46]։

Այնուհետեւ, մեկնաբանը թուրքական գազանութիւնները, որոնց ականատեսն է եղել, յիշեցնում է, որ թուրքերը օգտուեցին յարմար պահից՝ պատերազմից եւ իրականացրեցին իրենց ծրագրերը, հայերը ցրուեցին տարբեր երկրներ եւ այժմ, երբ խորհրդային կառավարութիւնը կազմակերպում է հայերի ներգաղթ, այդ մեծ քանակութեամբ ներգաղթը հնարաւոր չէ լիարժէք իրականացնել։ Այս փաստը նկատի ունենալով հայերը պահանջում են կարսն ու Արդահանը... չնայած թուրքերը յայտնում են որ կը պայքարեն տարածքները չզիջելու համար։ «... ամերիկեան կառավարութիւնը այս դէպքում չպէտք է դէմ կանգնի հայերի ցանկութեանը, ընդհակառակը, պէտք է համակրանք տածի ռուսական նախածեռնութեանը»[47]։

Այս համատեքստում ուշադրութեան է արժանի 1945թ. Նոյեմբերին ամերիկեան մի շարք նշանաւոր գործիչների կազմուած «Հայաստանի նկատմամբ արդարացի վերաբերմունքի համար պայքարի ամերիկեան կոմիտէի» գործունէութիւնը, որի նախագահն էր նախկին «Սովետաամերիկեան բարեկամութեան ազգային խորհրդի» նախագահ Էդուին Սմիթը։ Կոմիտէն գործունէութիւնը ուղղել էր տարագիր հայութեան պապական հայրենիք վերադարձին, հայկական տարածքների ազատագրման խնդրին։

---

45 Նոյն տեղում, թ. 171:
46 Նոյն տեղում, թ. 172:
47 Նոյն տեղում:

Խորհրդի անդամ Խորտինը յայտարարում էր, որ «Հայկական խնդրի արդարացի լուծումը կապուած է հայկական ճահանգների ազատագրման հետ»[48]:

Կոմիտէն իր մի շարք յայտարարութիւններով, անդամների ելոյթներով հասարակական կարծիք էր ստեղծում Հայկական հարցի նկատմամբ, ընդգծում այն թողտուութիւնները, որոնց օգնութեամբ թուրքական իշխանութիւնները կարողացան իրականացնել մարդկութեան դէմ ուղղուած ոճրագործութիւնը: Այդ առթիւ մեղադրելով Ազգերի Լիգային, Կոմիտէի անդամ Իսաաքսը յայտարարեց, որ չպէտք է թոյլ տալ, որ Միացեալ ազգերի կազմակերպութիւնը վերածուի նոր «Սրբազան դաշինքի», *որի նպատակն էր* «ստատուս քուոյի պաշտպանութիւնը ... Միացեալ ազգերի կազմակերպութիւնը պէտք է ուղղի անարդարութիւնը, որը թոյլ է տրուել հայ ժողովրդի նկատմամբ եւ Սովետական Հայաստանին յանձնել Թուրքիայի տիրապետութեան տակ գտնուող հայկական տարածքները»[49]:

Կոմիտէի անդամ Սմիթը քննադատութեան ենթարկելով ամերիկեան ազդեցիկ որոշ գործիչների այն կարծիքը, որ գըտնում են, թէ տարածքները վերադարձնելով ծառայութիւն է մատուցւում ԽՍՀՄ ռազմավարական ու տնտեսական շահերին, գըրում էր. «Այդ փաստարկը իրենից ներկայացնում է մարդկութեան ու արդարութեան դէմ մարտահրաւէր... այդ տեսակէտը չի համընկնում այն գաղափարին, որի համար պայքարում էին ամերիկացիները, ռուսները անգլիացիները եւ հայերը:

Հայկական հարցը ստեղծուել է նախկին Թուրքիայի պատմութեան սեւ էջերի կողմից...»[50]:

Այսպիսով, բերուած վկայութիւնները կարելի է բաժանել խմբերի: Քաղաքագէտները, հարցին քաջատեղեակ գործիչների մի մասը դէմ էր խնդրի լուծմանը, որովհետեւ այն գնահատւում էր որպէս Մերձաւոր Արեւելքում, Թուրքիայում, Իրանում ԽՍՀՄ դիրքերի ամրապնդում:

Երկրորդ խումբ գործիչները գտնում էին, որ առանց ԽՍՀՄ շահերը նկատի ունենալու, Հայկական հարցը արժանի է արդարացի լուծման, որ տարածքների վերադարձը օրինական է:

48 Նոյն տեղում, թ. 173:
49 Նոյն տեղում, թ. 176:
50 Նոյն տեղում:

digitised by

Հայկական հարցի քննարկումները, սակայն, մնացին որպէս քաղաքագիտական վերլուծումներ, բուն հարցը սառեցուեց, ինչն էլ Թուրքիայի նախագահ Ի. Ինենիւն իրաւունք էր տալիս յայտարարել, որ իր երկիրը չահեց նեարդային պատերազմը եւ նրանց դուրս եկաւ «աւելի ամուր»[51]:

Թուրքական «լաւատեսութեան» փայլուն օրինակ էր նաեւ նախագահի մէջլիսի նստաշրջանի բացման առթիւ 1945թ. Նոյեմբերի 1-ի ելոյթը: Ի. Ինենիւն չժխտելով իրականութիւնը, չխուսափելով ճշմարտութիւնից, յայտնում է, որ իրօք Թուրքիան դաշնակցային պայմանագիր էր կնքել Գերմանիային հետ, որը ոչ այլ ինչ էր, քան մարդասիրական, կովկասը գերմանական ներխուժումից փրկելու քայլ: Այդուհետ դիմելով պատգամաւորներին աւելացնում. «... որեւէ մէկուն պարտք չունիք վճարելիք, մեր իրաւունքներում եւ մեր հողերուն վրայ կ'ապրիք պատուաւոր մարդու պէս եւ կը մեռնիք պատուաւոր մարդու պէս»[52]:

Մի քազդային յարաբերութիւններ էր ներխուժում նոր փոխյարաբերութիւն, որին յետագայում տրուեց «Սառը պատերազմ» անունը: Այդ սառնութիւնը առկայ էր նաեւ Պոտսդամում, որի փաստաթղթերի ուսումնասիրութիւնը բերում են այն համոզմանը, որ ԱՄՆ ու Անգլիան միաւորելով ջանքերը, տապալում էին ԽՍՀՄ-ի, յատկապէս տարածքային ու սահմանային առաջարկները:

Ունենալով նման յենարան, Թուրքիան ոչ միայն անտեսում էր ԽՍՀՄ սպառնալիքները, այլեւ անբարեացակամութիւն դրսեւորում երէկուայ ահեղ ախոյեանի նկատմամբ:

1946թ. դեկտեմբերին Վաշինգտոնի Թուրքական դեսպանութեան հաւատարմատար Նիւզեթ Բաբան «Նիւ-Եորք Թայմս» թերթում հանդէս գալով տարածքային պահանջների քննութեան յօդուածով, յայտարարում էր. «...թուրքական սահմանները անփոփոխ են մնալու»: Ապա անդրադառնալով Վ. Վիլսոնի հիմնարար 14 կէտերին, դրանց վերաբերում է ցինիզմով, ընդգծում, որ Հայաստանում (խօսքը Արեւմտեան Հայաստանի մասին է – Ց. Զ.) հայ չկայ, իսկ դա նշանակում է, որ թողտուութեան ու պաշտպանութեան պարագայում Թուրքիան օգտւում է իր յանցագործութեան արդիւնքներից[53]:

---

51 ՀԱԱԾ, ֆ. 326, ց. 1, գ. 199, թ. 28:
52 «Ժողովուրդ», 4 նոյեմբերի, 1945:
53 ՀՀ ՀՔԿՓ ԿԸ ՊԱԾ, ֆ. 1, ց. 26, գ. 47, թ. 242:

Այստեղ արդէն որպէս դատարկ կրակոցի է վերածւում «առիւծ» մականունով Ֆրանսիայի վարչապետ Կլիմանսոյի հաւաստումները այն մասին, որ երբ գայ հաշիւները ճշտելու ժամանակը «նկատի կ'առնենք հայերի ընդհանուր կորուստների բաձակը»[54]*:*

Բնական է, որ փոխուող աշխարհաքննկալումը նոր չափորոշիչներ էր ասպարէզ բերում, որը չէր ուզում նկատել ԽՍՀՄ ղեկավարութիւնը եւ նախկին տրամադրութիւններով ցանկանում էր հասնել իր նպատակին:

Ահա այս բարդ ու հակասական իրավիճակի պայմաններում օրակարգում յայտնուած հայկական տարածքների խնդիրը ստանալու էր համապատասխան որակաւորում, գնահատուելու էր որպէս ԽՍՀՄ ծաւալապաշտական քաղաքականութեան արդիւնք, դէպի Մերձաւոր ու Միջին Արեւելք հիմնաւորելու ճգտում եւ չէր արժանանալու արդար լուծման:

Ներկայացուած մինչպոտսդամեան եւ յետպոտսդամեան փաստաթղթերը խօսում են այն պարզունակ ելքի մասին, որն արձանագրելու էր Հայկական հարցը հերթական անգամ մերժելու վերջաբանը:

Պոտսդամում լուծում չստացաւ Հայկական հարցը, բայց դա չէր նշանակում, թէ այն դուրս է օրակարգից: Հայկական կոմիտէները, հայանպաստ ընկերութիւնները, գործիչները այն կարծիքին էին, որ պէտք է չարունակել պայքարը եւ առնուազը ՄԱԿ-ի քննարկմանը ներկայացնել հայութեան գերխնդիրը:

1947թ. ապրիլ-մայիս ամիսներին Նիւ-Եորքում գումարուեց հայերի համաշխարհային կոնգրէս: Մայիսի 12-ին կոնգրէսի պատուիրակութիւնը ընդունեց ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Դ. Աչեսոնը: Ծանօթանալով հայերի նամակին, նա յայտնում է. «Հայերը ինչ ևն անելու այդ հողերը, որպէսզի չե՞ն ցանկանում ՄԱԿ-ի հովանու տակ կազմաւորել հայկական անկախ պետութիւն»: Հայկական պատուիրակութեան անդամ Ներսոյեանը պատասխանում է, որ հայերը ցանկանում են այդ հողերը յանձնել Խորհրդային Հայաստանին: Շփոթուած ու զարմացած պետքարտուղարի տեղակալը հարցնում է՝ արդեօ՞ք բոլոր հայերը կոմունիստ են դարձել, որ պատրաստւում են տեղափոխուել Սովետական Միութիւն, ապա աւելացնում, որ «Պետական դեպարտամենտը չի կարող պաշտպանել նման խնդրանքը, որովհետեւ այն իմքնա-

54 Նոյն տեղում:

սպաննութիւն կը լինի ԱՄՆ-ի արտաքին քաղաքականութեան համար»[55]:

Ամերիկեան քաղաքականութիւնը, որ ուղղուած էր Մերձաւոր ու Միջին Արեւելքը իր ազդեցութեան տակ գցելու, դէպի Միջերկրական ծով ԽՍՀՄ-ի ծրագրերը խափանելուն, Հայկական հարցի պաշտպանութիւնը կը նշանակէր եւս կանգնել մշակուած կողմնորոշումից: Նկատի էր առնւում նաեւ այն հանգամանքը, որ լուծել Հայկական հարցը, նշանակում էր նպաստել ստալինեան ծրագրերի իրականացմանը:

Այստեղ կարեւորութիւն էր ստանում նաեւ այն իրավիճակը, երբ բացի Հայաստանից, որպէս պահանջատէր էր հանդէս գալիս նաեւ Վրաստանը: Սա մեծագոյն օգնութիւն էր հակախորհրդային քաղաքականութեանը, որովհետեւ նման խառը պայմաններում դիւրին էր յետաձգել պահանջատիրութեան հարցը, կամ այն վերաորակել որպէս թուրք-խորհրդային եւ ոչ «Մեծ եռեակի» խնդիր:

Ջուգահեռ, որպէս պահանջատէր ներկայացնելով Վրաստանին, ԽՍՀՄ ղեկավարութիւնը արժէզրկում էր հայութեան խընդիրը, վերածում էր բազմաբնոյթ չհարկումների առարկայի: Ջզգուշանալով անգամ խնդրի տապալման վտանգից, ԽՍՀՄ դիւանագիտութեան պատասխանատուները կրեմլի տիրոջը հաճոյանալու համար փորձում էին առաջնային դիրք ապահովել վրացական պահանջներին, որը խարխլում էր ոչ միայն ԽՍՀՄ հեղինակութիւնը, այլեւ Հայկական հարցը մղում էր փակուղի:

1947թ. հոկտեմբերի 24-ին ՄԱԿ-ի գլխաւոր ասամբլեայի քաղաքական խորհրդում ԽՍՀՄ ԱԳ նախարարի տեղակալ Ա. Վիշինսկին պատասխանելով Ս. Սարպերի քննադատութեանը, յայտարարում է, թէ «կարսը եւ Արդահանը վրացական հինաւուրց հողեր են... Այդ ամէնը այնքան համոզիչ է ապացուցուած, որ ես պարոն Սարպերին խորհուրդ եմ տալիս մէկ անգամ եւս կարդալ վրացական ակադեմիկոսների շատ սկզբնաղբիւրների վկայակոչմամբ ակադեմիական ոճով գրուած ճամակը համերաշխօրէն արտայայտուելով, որ այդ հողերը վերադարձուեն վրացական հանրապետութեանը, վրաց ժողովրդին պատմական, ժողովրդագրական, քաղաքական ու այլ հիմունքներով: Դա արդարացի է, որովհետեւ այդ հողերը վրացական են»[56]:

---

55 ГАСАНЛИ Д., նշ. գիրքը, 394-395:
56 "Правда", 28 X 1942.

ԽՍՀՄ ԱԳ նախարարի տեղակալի ելոյթը ուրիշ ոչինչ չէր, եթէ ոչ պետական քաղաքականութեան արտայայտութիւն: Թէեւ Ա. Վիշինսկին 1947թ. նոյեմբերի 25-ին ընդունեց ամերիկահայութեան պատուիրակութիւնը, սակայն նրա «պարզաբանումները» դիւանագիտական հնացած խաղեր էին: Նախարարի տեղակալը արդարացաւ, որ թերթերը աղաւաղել են իր մտքերը, որ ինքը երբեք նշուած չրջանները չի համարել վրացական:

Ա. Վիշինսկու ելոյթը լայն արձագանք ստացաւ: Հայ ազանդական կուսակցութիւնները իրենց դիրքորոշումները յայտնելուց բացի, յետագայ գործունէութեան առաջարկներ էին անում: Ռամկավարները հայութեանը կոչում էին հանգստութեան: ՀՑ Դաշնակցութիւն կուսակցութիւնը ելոյթը համարում էր ողբերգութիւն եւ աւելացնում, որ ԽՍՀՄ-ը ներկայացնելով հողային պահանջ, նպատակ չունի այն միաւորել Վրաստանին կամ Հայաստանին, այլ Ռուսաստանին: Հանդէս գալով այս կամ այն հանրապետութեան անունից, կրեմլը նրանց օգտագործում է որպէս վարագոյր, իր նպատակների քօղարկում: Այնուհետեւ «Ցուսաբեր» թերթը քննադատութիւնը ուղղում է ՀԽՍՀ բնակչութեանը, որ լռում է Ա. Վիշինսկու անհանգստացնող յայտարարութեան հարցում[57]*:*

Թուրքական մամուլը քննադատում էր ոչ միայն Ա. Վիշինսկուն, այլեւ Մարպերին, որ արժանի պատասխան չի տուել եւ պահանջում էր նրան հեռացնել պաշտօնից, փոխարինող նշանակելով աւելի «վճռական մարդու»[58]*:*

Թուրքական մէկ այլ թերթ նոյն հակախորհրդային ոգով գրում էր, թէ ռուսական պահանջները նշանակում են, որ նրանք ճգտում են «կամ պատերազմի, կամ հանրաքուէի»: Ցօդուածագիրը կողմ է հանրաքուէին այն առումով, որ եթէ հանրաքուէ անցկացուի Ռուսաստանում, որը իր գոյութիւնը պահպանում է բանակի չնորհիւ, կը մասնատուի, իսկ Թուրքիան մի թիզ անգամ չի կորցնի[59]*:*

Թուրքական լրատուամիջոցների հակախորհրդային տրամադրութիւնները, մեկնաբանութիւնները թմբիրից հանեց Ադրբեջանի հակահայկական ուժերին, որոնք ղեկավարում եւ ուղղութիւն էր տալիս երկրի մուսաւաթա-բոլշեւիկեան կենտկոմը:

57 «Ցուսաբեր», 30 X 1947:
58 «Ալիֆ», 10 X 1947:
59 ГАСАНЛИ Д., նշ. գիրքը, 397:

digitised by

Քանի որ ԽՍՀՄ-ի ներսում Ադրբեջանի ղեկավարութիւնը սերտօրէն համագործակցելով կենտրոնական իշխանութեան հետ լուեցրել էր Հայաստանի կողմից ԱԽՄՀ-ին ներկայացուած տարածքային պահանջները, ուստի յարձակման նշանակէտ ընտրուեց ՀՁ Դաշնակցութիւն կուսակցութիւնը։ Ադրբեջանի անվտանգութեան մարմինները արտերկրում զբաղուած էին ՀՁ Դաշնակցութեան մասին տեղեկութիւններ հաւաքելով, որոնք կենտրոնացնելով Բաքւում, «Արտասահմանի դաշնակների հակախորհրդային գործունէութիւնը» վերնագրով տեղեկանքով ներկայացնում էին խորհրդային ղեկավարութեանը։ Այդ փաստաթղթից տեղեկանում ենք, որ ՀՁ Դաշնակցութիւն կուսակցութիւնը իր շարքում ունի 8000, երիտասարդական կառոյցը 7000 անդամ, որ դաշնակցութիւնը կազմում է սփիւռքահայութեան 2.145%-ը[60]։

Եւ ԽՍՀՄ եւ ԱԽՄՀ անվտանգութեան ծառայութիւնները ժրաջան աշխատանք էին տանում առաւել մանրամասն տեղեկութիւններ ձեռք բերել 1947թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին կահիրէում գումարուած ՀՁԴ 14-րդ Ընդհանուր ժողովի մասին, որովհետեւ ժողովի օրակարգը եւ արտայայտիչ էր, եւ վտանգաւոր, քանզի այն առնչւում էր թէ ԽՍՀՄ-ի, թէ Թուրքիայի, թէ Հայկական հարցին։

Ժողովի քննարկուող հարցերի թւում էր Դաշնակցութեան ղեկավարութեամբ «Միացեալ եւ անկախ» հայկական պետութեան ձեւաւորման խնդիրը։ Այդ առումով Ալեքսանդրեթի գաւառում «Անկախ հայկական հանրապետութեան» ստեղծելու գաղափարը, փաստօրէն Հայկական հարցի լուծման առաջին քայլն էր լինելու։ կարծես մօտենում էր այն պահը, երբ «Մեծ եռեակի» երկու անդամների օգնութեամբ սփիւռքահայութիւնը ունենալու էր ազգային օջախ։ Նման տեսակէտը իրական էր թւում նաեւ այն պատճառով, որ ժողովում ելոյթ ունեցաւ հայերէնին լաւ տիրապետող անգլիական հետախուզութեան կապիտան Վիլեամսը։

«Ազգային օջախի» գաղափարը նոր երեւոյթ չէր Հայկական հարցի պատմութեան մէջ։ Այն արծարծուել էր Ազգերի լիգայի քննարկումներում, օրակարգային հարց էր Լոզանի կոնֆերանսում։ Երկու դէպքում էլ խնդիրը տապալուեց Թուրքիային հովանաւորող պետութիւնների կողմից, իսկ Լոզանի կոնֆերանսում նրանց միացաւ նաեւ ԽՍՀՄ-ը։ Անգլո-ամերիկեան կողմը այս անգամ հովանաւորելով գաղափարը, նպատակ չունէր լուծել այն,

60 Նոյն տեղում։

պարզապէս կիրառւում էր հերթական դիւանագիտական ազդեցիկ քայլ, որով ԽՍՀՄ-ին ներքաշելու էին նոր խնդիրների ոլորտ, խորացնելու էին սկսուած սառը պատերազմի ընթացքը, կրեմլի ղեկավարութեանը ստիպելու էին կատարել յանպատրաստից քայլեր եւ ամենակարեւորը՝ մարելու էին Թուրքիային ներկայացուած տարածքային պահանջների կրակը, ռազմական ճանապարհով հարցի լուծումը, Թուրքիային սպառնացող վտանգը թողնելով պատմութեան ոլորաններում:

Անգլո-ամերիկեան դաշնակցութեանը յաջողուեց կայացնել իրենց ծրագիրը: Ատոմային ռումբի գործարկումը, Տրումենի դոկտրինան, ՆԱՏՕ-ի գործունէութեան ծաւալումը, ԳՖՀ-ի կազմաւորումը ծանրակչիռ քայլեր էին, որոնք ձեւաւորեցին աշխարհաքաղաքական նոր մտածողութիւն, աշխարհը ներքաշելով երկբեւեռ հակամարտութեան ասպարէզ: Այս համատեքստում նորից փխրուն վիճակում յայտնուեց Հայկական հարցը, որովհետեւ սկսուեց հայրենիք-սփիւռք առանց այն էլ թոյլ կապի խզման գործընթացը, պառակտման եզրին հասցնելով հայ եկեղեցու միասնութիւնը: Այս վիճակը ընդունելի տարբերակ էր թէ ԽՍՀՄ-ի, թէ ԱՄՆ-ի համար: ԱՄՆ-ը կեղծ հովանաւորութիւն եւ սրտցաւութիւն ցուցաբերելով, սփիւռքահայութեանը կ'ուղղորդէր ազգային հարցում ԽՍՀՄ-ի հակահայկական, երկիրը բռնի խորհրդայնացնելու քաղաքականութեան քննադատութեանը, իսկ ԽՍՀՄ-ը օգտագործելով ճնշիչ լծակները, ՀԽՍՀ ղեկավարութեանը կը մղէր հայրենասիրական ուժերին մերժելու, նրանց «ազգայնամոլութիւնը» ժխտելու դիրքեր, դէպի կոմունիստական հասարակարգի կառուցում ընթացող ճեւով ազգային, բովանդակութեամբ սոցիալիստական հայրենիքի պայծառ ապագայի կանխատեսումները ներկայացնելով որպէս Հայկական հարցի լուծման մեծագոյն նուաճում:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԶԱՏԻԿԵԱՆ

Summary

THE ARMENIAN QUESTION IN DISCUSSIONS AFTER THE POTSDAM PERIOD

HOVHANNES ZATIKYAN

On July 23, 1945 at 17.10 minutes in Potsdam it was convened the seventh conference with participation of three allies, under the presiding of Truman, who, summarizing the discussed issues, also touched upon the Armenian territories and, explaining the US position, said: "With regard to the territorial issue, it applies only to the Soviet Union and Turkey and should be settled between them."

As for the requirements of the territorial issue, later, except this evasive thoughts, he wrote in his memoirs that the USSR, in the presentation of the report of Molotov, intended to solve the territorial problems "before the alliance signing". We are talking about the new Soviet-Turkish treaty, which was required by the USSR.

After that the territorial issue has not been longer seen, although on July 23, 1945 during a meeting of the foreign ministers it was agreed to amend the agenda as submitted for review by the government, including the Turkish question.

In the postwar years, the geopolitical contradictions had not been silenced , but there also have been found the new outbreaks in different regions. After the defeat of Japan and using of nuclear weapons the USA had already considered themselves as a superpower state. In this direction there have been developed the Truman Doctrine as well as the Marshall program. After the formation of the USSR as a nuclear power state, the arms race has received a new strength.

Simultaneously to noting the new movements, the focus remained on the unresolved issues analysis. In a number of these problems the Armenian question was remained, although it seemed to be not under that name, but as "territorial requirements to the Turkey from the Republic of Armenia."

The Anglo-American part tried to find out whether the Armenians had really territorial demands or it was a provocation on the part of the Soviet government, and who owned these areas actually.

Henceforth it was formed a point of view that the territorial demands were nothing as the imperial intentions for the implementation of the exit to the Mediterranean. In this sense, the primary was the defense of Turkey. By this way , the situation that was created during the final stages of the I-st World War till the Lausanne Conference was repeated, when the defeated Turkey was granted the status of the winner.

Hence, at least a partial solution of the Armenian question would paving the way for Russia to Straits and the Mediterranean.

The Kars and Ardahan problem at the highest level was examined in London in September 1945 during the meeting of the Foreign Ministry with the participation of the five permanent members of the UN Security Council.

The problem of the Armenian territories in Potsdam was raised, as the documents show, without preparation, without any organized preliminary discussions of the allies, hastily.

The Soviet part was full of hope that the Turkey will accept the demand, as in the war years, the Turkey's behavior tended to appropriate decisions and in order to avoid the punishment, the Turkey would agree. But quite the opposite was happened. The Turkey refused not only providing the bases in the Straits, as well as the requirement of territorial concessions.

It was also illogical the following novalty from the Soviet part , when after some time, Georgia was represented as a next claimant .

In fact, the Soviets did not solve the just demands of the Armenian question, without historical foundation they had introduce a third party, which, moreover, has deprived the Armenian question authority, creating conditions for remaining the problem as unsolved.

The same opinion was the international media, which reported its view on the Armenian lands. They considered the territorial claims as one of the tricks of the USSR.

In contrast to the Anglo-American-Turkish position many progressives, who were familiar with the history of the Armenian genocide of 1915 , defended the view to return the territory to its rightful owners - Armenians.

The Anglo-American alliance was able to implement its program. The atomic bomb, the Truman Doctrine, the NATO's development, the creation of the FRG were significant steps that have shaped the new geopolitical worldview, engaging the world in a new bipolar arena of conflict . In this context, once again the Armenian question was in a fragile state, as a process of rupture of enough weak link, Motherland-Diaspora was started, bringing to the verge of splitting the unity of the Armenian Church. This state was the appropriate choice both for the USSR and the USA. Demonstrating the false protection and compassion the USA sent the Armenian Diaspora to the way of criticism of anti-Armenian policy of the USSR in the national question and the Soviet Union, using the repressive levers, sent the guidance of the Arm. SSR on the path of

digitised by

non-domestic forces, accusing them in "the nationalism", predicting a bright future of the socialist homeland, presenting it as the greatest achievement in resolving the Armenian question.

With the participation of three members from each party there was created a governing body of the council. The President of the Council was elected as a Democrat Petros C. Terzian, including twenty national organizations. In different states of the country there were formed till fifty branches.

The Armenian Revolutionary Federation "Dashnaktsutyun" " under the guidance of A. Darbinyan and S. Vratsyan in the USA formed the Armenian National Committee. Under the chairmanship of A. Chopanyan there was created a French-Armenian National Committee. In Egypt, a national committee was formed headed by the artist Al. Sarukhanian. The National committees operated in Lebanon, Greece, Uruguay, Palestine.

In February and May 1944 the French-Armenian youth has developed four brochures that secretly, under German occupation, were propagated in the Armenian communities in France.

The brochures in oratorical style reported to multiple masses on the restructuring of the Armenian diaspora in the future, predicting the decision of the Armenian question, which follows from the basic provisions to protect the rights of peoples.